ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՍԵՐՄՆ Է, ՄԵՐ ՍԻՐՏԸ՝ ՀՈՂԸ:
ՀԱՎԱՔԻՐ ԽՈՍՔԸ

ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ.

Աստծո խոսքը հաճախ նշվում է որպես սերմ, և ժամանակ է հարկավոր, որ այն աճի մեր սրտերում և ազդեցություն ունենա մեր կյանքի վրա: Աստծո Խոսքը Սերմն է, մեր սիրտը՝ Հողը:

Հով. 20:22 - *22 Եւ սա ասելով փչեց նրանց վրա և ասեց. Առէք Սուրբ Հոգին:՝*

Վաթսունվեց գիրք: Հազար հարյուր ութսունինը գլուխ: Գրված լինելով 40 անձանց միջոցով 1500 տարվա ընթացքում՝ Աստվածաշունչը շատ ավելին է, քան ընդամենը մի մեծ և հին գիրք.

Մար. 4:26-29 - *26 Եւ ասում էր. «Այսպէ՛ս է Աստծու արքայութիւնը. որպէս թէ մի մարդ հողի մէջ սերմեր ցանի. 27 Եւ գիշեր ցերեկ քնէ և վեր կենա. Եւ սերմերը կը բուսնեն ու կ՝աճեն: 28 Եվ նա չի իմանա, թէ հողը ինքն իրենից բերք է տալիս. նախ՝ խոտը, ապա՝ հասկը և նորանից հետո լցված ցորենը հասկի մէջ: 29 Սակայն երբ սերմը իր պտուղը տա, իսկույն մանգաղ է ուղարկում, որովհետև հնձի ժամանակը հասել է:*

Աստծո Խոսքը Սերմն է, մեր սիրտը՝ Հողը: Իսկ ժամանակը նշում է մեր կյանքը երկրի վրա:

Ղուկ. 8:11 - *11 Արդ առակն այս է. Սերմը Աստուծո խօսքն է:*

1 Պետ. 1:23 - *23 Դուք Վերստին ծնվեցիք ոչ թէ ապականության սերմից այլ անապական սերմից. Աստուծոյ կենդանի և հավիտենական խօսքովը:*

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ԾՆՆԴ. 41:53-57

53 Եւ Եգիպտոսի երկրում առատության եօթը տարին անցավ: 54 Եւ Հովսէփի ասածի պէս սկսեցին գալ սովի եօթը տարին. Եւ բոլոր երկիրներում սով եղավ, բայց Եգիպտոսի երկրի մէջ հաց կար: 55 Եւ երբոր Եգիպտոսի բոլոր երկիրը անօթեցավ, ժողովուրդը հացի համար դէպի Փարավօնն աղաղակեց. Եւ Փարավօնն ասեց բոլոր Եգիպտացիներին. Գնացէք Հովսէփի մօտ, ինչ որ ձեզ ասի արէք: 56 Եւ սովը երկրի բոլոր երեսի վրա եղավ. Եւ Հովսէփը բացեց բոլոր շտեմարանները, որոնց մէջ պաշար կար և Եգիպտացիներին պաշար ծախեց. Եւ սովը սաստկացավ Եգիպտոսի երկրում: 57 Եւ բոլոր աշխարհ գալիս էին Եգիպտոս Հովսէփից պաշար ծախու առնելու. որովհետև ամեն երկրի մէջ սովը սաստկացավ:

- ***Հովսեփը պաշար հավաքեց առատության եօթը տարիներում:***

1. ՀԻՄԱ Է ԺԱՄԱՆԱԿԸ ՀԱՎԱՔԵԼՈՒ ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ:

Ծննդ. 41:46-49 - *46 Եւ Հովսէփը երեսուն տարեկան էր, երբոր Եգիպտոսի Փարավօն թագավորի առաջին կանգնեց, և Հովսէփը Փարավօնի առջևից դուրս ելավ և Եգիպտոսի բոլոր երկիրը ման եկավ: 47 Եւ առատության եօթը տարիներում երկիրը խիստ շատ արդյունք տվեց:*

48 Եւ եօթը տարիներ բոլոր պաշարը որ Եգիպտոսի երկրում եղավ, ժողովեց, և քաղաքներում դրեց պաշարը. Այն քաղաքի շուրջի արտերի պաշարը նույն քաղաքի մէջ դրեց: 49 Հովսէփը ծովի ավազի չափ շատ ցորեն հավաքեց ու ամբարեց այնտեղ այնքան, որ հնարավոր չէր հաշվել, քանի որ անթիվ-անհամար էր:

46 Եւ Հովսէփը երեսուն տարեկան էր... ու ամբարեց այնտեղ այնքան, որ հնարավոր չէր հաշվել:

- *Հվսեփի համար պարզ էր հավաքելու նպատակն ու ժամանակը:*
- *ԻՆՉՈ՞Ւ Է ՊԵՏՔ ԼՑՎԵԼ ԱՍՏԾՈ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԽՈՍՔՈՎ:*
  ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս ԵՆՔ ԱՅԴ ԱՆՈՒՄ:

56 Եւ Հովսէփը բացեց բոլոր շտեմարանները, որոնց մէջ պաշար կար և Եգիպտացիներին պաշար ծախեց. (մենք խոսքը լսում և հավաքում ենք մեր շտեմարանի մեջ)

> Ամո. **8:11-12 -** 11 Ահա օրեր են գալիս, ասում է Տէր Եհովան, որ սով պիտի ուղարկեմ երկրի վրա, ոչ թէ հացի սով և ոչ ջրի ծարավ, այլ Տիրոջ խօսքը լսելու: 12 Եւ պիտի թափառեն ծովից մինչև ծով և հյուսիսից մինչև արևելք, և նորանք պիտի ման գան Տիրոջ խօսքը որոնելու համար, և պիտի չ'գտնեն:

- *Աստվածաշունչը քարոզվում է հեռուստատեսությամբ եւ ռադիոյով: Այն քարոզվում է ինտերնետում: Այն կարող է մուտք գործել անհամար կայքերում, հարյուր տարբեր թարգմանություններով եւ 1000 լեզուներով:*
- *Ձեր կյանքն ու առողջությունը օգտագործեք Աստծո խոսքը հավաքելու համար:*

2. ԿԼԻՆԵՆ ՕՐԵՐ, ԵՐԲ ԱՅԼԵՎՍ ՉԵՔ ԿԱՐՈՂ ԼՍԵԼ – ՀԱՎԱՔԵԼ ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ: ՀՈՎՍԵՓԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՓԱՐԱՎՈՆԻՆ:

Ծննդ. **41:35-36 -** 35 Եւ այն եկող լավ տարիների բոլոր պաշարը հավաքեն. Եւ Փարավոնի ձեռքի տակ ցորեն դիզեն, և քաղաքներում պաշար պահեն: 36 Եւ կերակուրը պաշար լինի երկրի համար այն եօթը տարվա սովի դէմ, որ Եգիպտոսի երկրում լինելու է, որ երկիրը սովից չկորչի:

Հավաքիր Խոսքը քանի դեռ հնարավորություն ունես:

Ժող. **12:1-7 -** 1 Եւ Հիշիր քո ստեղծողին քո երիտասարդության օրերում, քանի որ չեն եկել թշվառության օրերը, և չեն հասել այն տարիները, որ ասես թէ Նորանց չեմ հավանում: 2 Քանի դեռ քեզ համար չեն խավարել արեգակն ու լուսնը և լուսինն ու աստղերը, քանի դեռ ամպերը չեն վերադարձել անձրևից հետո.

3 Այն օրը, որ կդողդողան տան պահապանները, և կկորանան զօրավոր մարդիկ, և կդադարեն աղացողները քիչ լինելու համար. Եւ պատուհաններից նայողները կմթնեն:

4 Եւ դրսի դռները կկապվեն՝ աղօրիքի ձայնը տկարանալով. Եւ նա վեր կկենա թռչունի ձայնով, և բոլոր երգող աղջիկները նկուն կլինեն:

5 Մի բարձր տեղից մինչև անգամ կվախենան, և վախվախելով կգնան ճանապարհը, և նշենին կծաղկի, և մարախը կծանրանա, և ախորժակը կդադարէ. Որովհետև մարդս գնում է իր հավիտենական տուն. Եւ դրսում շրջապատում են լացողները:

6 Քանի որ չի կտրվել արծաթի թելը, չէ կոտրվել ոսկի բաժակը, և չի փշրվել սափորը աղբյուրի մօտ, և չի կոտրվել անիվը ջրհորի վրա,

7 Եւ հողը ետ չի դարձել երկրին ինչպէս որ էր, և հոգին ետ չէ դարձել Աստուծո մօտ, որ տվել էր: 8 Ունայնութիւն ունայնութեանց, - ասաց Ժողովողը, - ամէն ինչ ունայն է:

ԵՒ ՀԻՇԻՐ ՔՈ ՍՏԵՂԾՈՂԻՆ...

Կան երեք բաներ որոնք ցույց են տալիս ծերացման սկիզբը. Առաջինը, կորում է մարդու հիշողությունը, եւ ես չեմ կարող հիշել մյուս երկուսը:

2 Տիմ. **4:7-8 - 7** Բարի պատերազմը պատերազմեցի, ընթացքը կատարեցի, հավատքը պահեցի. 8 Այսուհետև մնում է ինձ արդարութեան պսակը, որ Տէրը կ'տայ ինձ այն օրումը՝ արդար դատաւորը. և ոչ միայն ինձ, այլ և ամենին, որ սիրեցին նորա հայտնությունը:

3. ՄԵՐ ԱՅՍՕՐՎԱ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԸ՝ ԵՐԵԿՎԱ ՑԱՆՎԱԾ ՍԵՐՄԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆ Է:

Ծննդ. **47:12 -** Եւ Հովսէփը սնուցանում էր իր հօրն և իր եղբայրներին և իր հօր բոլոր տանը՝ հաց տալով ընտանիքներին:

Ծննդ. **45:7-8 -** 7 Եւ Աստուած ինձ ձեր առաջին ուղարկեց որ երկրի վրա ձեզ համար սերունդ պահէ, և ձեզ ապրեցնէ մեծ ազատությունով: 8 Եւ արդ՝ ոչ թէ դուք ուղարկեցիք ինձ այս տեղ, այլ Աստուած. Եւ ինձ Փարավօնին հայր և նորա բոլոր տանը տէր Եգիպտոսի բոլոր երկրին իշխան դրավ:

ԱՄՓՈՓՈՒՄ

- Ես. 30:23 - 23 Եւ նա անձրեւ կտայ արտումը սերմած սերմիդ, եւ երկրի արդիւնքիցը՝ հաց. եւ առատ ու պարարտ կլինի. Այն օրը քո խաշինքը ընդարձակ արօտում կարածեն: